**Ծովինար ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Ծնվել է 1971թ. հուլիսի 5-ին, Երևանում:

***Կրթությունը՝***

2009-2010թթ. — ՆԱՏՕ-ի պաշտպանական քոլեջ, հետազոտող (research fellow), Հռոմ, Իտալիա,

2008թ. — ՆԱՏՕ-ի պաշտպանական քոլեջ, Անվտանգային գիտություններ, Հռոմ, Իտալիա,

2005-2006թթ. — Քաղաքական դասընթացների երևանյան դպրոց,

1989-1994թթ. — Երևանի պետական համալսարան, Արևելագիտության ֆակուլտետ, Արևելյան լեզուներ և գրականություն (թուրքագետ):

***Աշխատանքային գործունեություն՝***

2022-2024թթ. — համատեղության կարգով Սան Մարինոյի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Հռոմ),

2022-2024թթ. — համատեղության կարգով Մալթայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Հռոմ),

2020-2024թթ. — Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Հռոմ),

2018-2020թթ. — Վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ,

2002-2018թթ. — ՀՀ Նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչություն, գլխավոր մասնագետ, խորհրդատու, վարչության պետ,

1998-2002թթ. — ՀՀ Նախագահի մամուլի քարտուղարի գրասենյակ, գլխավոր մասնագետ,

1998թ. — ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական ծառայություն, առաջատար մասնագետ,

1996-1998թթ. — ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդականի աշխատակազմ, 1-ին կարգի մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ,

1995-1996թթ. — ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական բաժին, փորձագետ,

1992-1995թթ. — Էջմիածնի Ներսիսյան վարժարան, թուրքագիտության ուսուցչուհի:

***Պարգևներ՝***

2007թ. պարգևատրվել է ՀՀ Նախագահի շնորհակալագրով,

2017թ. պարգևատրվել է Երախտագիտության մեդալով:

***Օտար լեզուներ՝***

Անգլերեն, ռուսերեն, իտալերեն:

***Ընտանեկան կարգավիճակ՝***

Ունի դուստր:

***ՀՀ նախագահի՝** 2024 **թվականի հոկտեմբերի** 24-**ի հրամանագրով նշանակվել է Բուլղարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Սոֆիա)**:*